



Հաշմանդամության Նպաստներ

Բովանդակություն

Հաշմանդամության նպաստներ`	1
Ո՞վ կարող է ստանալ Սոցիալական Ապահովության նպաստներ`	2
Ինչպե՞ս ես պետք է դիմեմ հաշմանդամության նպաստների համար`	4
Ե՞րբ ես պետք է դիմեմ, և ի՞նչ տեղեկատվություն է ինձ անհրաժեշտ`	4
Ով է որոշում, թե արդյո՞ք ես հաշմանդամ եմ`	5
Ինչպե՞ս ենք մենք որոշում կայացնում`	6
Ի՞նչ է տեղի ունենում, երբ իմ պահանջը հաստատվում է`	8
Արդյո՞ք կարող է իմ ընտանիքը նպաստներ ստանալ`	8
Ինչպե՞ս են այլ վճարները ազդում իմ նպաստների վրա`	9
Ի՞նչի մասին ես պետք է տեղեկացնեմ Սոցիալական Ապահովությանը`	9
Ե՞րբ եմ ես ստանում Medicare-ի ծածկույթ`	10
Ի՞նչ է ինձ անհրաժեշտ իմանալ աշխատելու մասին`	10
Աշխատանքի Ձեր Կտրոնը ծրագիրը`	11
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	11

Հաշմանդամության նպաստներ`

Հաշմանդամությունը դա այնպիսի բան է, որի մասին շատ մարդիկ չեն ցանկանում մտածել: Սակայն, Ձեր հաշմանդամ դառնալու հավանականությունը շատ ավելի մեծ կարող

է լինել, քան Դուք իրականում գիտակցում եք: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, մինչև կենսաթոշակի անցնելու լրիվ տարիքին հասնելը, 20-ամյա աշխատողի հաշմանդամ դառնալու հավանականությունը 4-ից 1-ն է:

Այս տեղեկագրում ներկայացված է Սոցիալական Ապահովության հաշմանդամության նպաստների վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը, և այն չի ենթադրում բոլոր հարցերի պատասխանները: Ձեր դեպքի վերաբերյալ հատկանշական տեղեկատվություն ստանալու համար՝ Դուք պետք է խոսեք Սոցիալական Ապահովության ներկայացուցչի հետ:

Մենք վճարում ենք հաշմանդամության նպաստները երկու ծրագրի միջոցով. Սոցիալական Ապահովության հաշմանդամության ապահովագրության ծրագիր (Social Security disability insurance (SSDI)) և Հավելյալ Ապահովության Եկամտի ծրագիր (Supplemental Security Income (SSI)): Տվյալ տեղեկագիրը անդրադառնում է Սոցիալական Ապահովության հաշմանդամության ծրագրին: Չափահասների համար SSI-ի հաշմանդամության ծրագրի վերաբերյալ տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ *Հավելյալ Ապահովության Եկամուտը (Supplemental Security Income (SSI) տեղեկագրից (Հրատարակություն թիվ 05-11000-AM):* Երեխաների համար հաշմանդամության ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ *Նպաստներ հաշմանդամություն ունեցող երեխաների համար (Benefits For Children With Disabilities) տեղեկագրից (Հրատարակություն թիվ 05-10026-AM):* Մեր հրատարակությունները հասանելի են առցանց՝ **www.socialsecurity.gov** կայքէջում:

Ո՞վ կարող է ստանալ Սոցիալական Ապահովության նպաստներ՝

Սոցիալական Ապահովությունը վճարում է նպաստներ այն անձանց, որոնք ի վիճակի չեն աշխատելու՝ ելնելով իրենց առողջական վիճակից, ինչը ակնկալվում է շարունակվել առնվազն մեկ տարի կամ կարող է հանգեցնել մահվան: Դաշնային օրենքը պահանջում է հաշմանդամության

տվյալ խիստ սահմանումը: Մինչդեռ, որոշ ծրագրերի շրջանակներում՝ մասնակի կամ կարճաժամկետ հաշմանդամություն ունեցող անձանց գումարներ են տրամադրվում, Սոցիալական Ապահովությունը դա չի անում: Հաշմանդամ աշխատողների ընտանիքի որոշ անդամներ կարող են նույնպես գումար ստանալ Սոցիալական Ապահովությունից: Այդ մասին բացատրությունը ներկայացված է 8-րդ էջում:

Ինչպե՞ս եմ ես համապատասխանում հաշմանդամության նպաստի համար հասույթի պահանջներին՝

Սովորաբար, հաշմանդամության նպաստ ստանալու համար, Դուք պետք է համապատասխանեք հասույթի երկու տարբեր ստուգարքների՝

1. Վերջին աշխատանքի ստուգարքին, որը հիմնված է Ձեր տարիքի վրա՝ հաշմանդամ դառնալու պահին; և
2. Աշխատանքային տևողության ստուգարքին, որը ցույց է տալիս, որ Դուք բավականաչափ աշխատել եք Սոցիալական Ապահովության ներքո:

Որոշ կույր աշխատողներ պետք է համապատասխանեն միայն աշխատանքային տևողության ստուգարքին:

Հետևյալ աղյուսակում ներկայացված են այն կանոնները, որոնք սահմանում են վերջին աշխատավայրի ստուգարքի համար անհրաժեշտ աշխատանքի տևողությունը՝ հիմնված Ձեր տարիքի վրա՝ հաշմանդամ դառնալու պահին: Նշված աղյուսակում ներկայացված կանոնները հիմնված են *օրացույցային եռամսյակի* վրա, որում լրացել է կամ կլրանա Ձեր որոշակի տարիքը:

Օրացույցային եռամսյակները հետևյալն են՝

Առաջին եռամսյակ՝ հունվարի 1-ից մինչև մարտի 31-ը

Երկրորդ եռամսյակ՝ ապրիլի 1-ից մինչև հունիսի 30-ը

Երրորդ եռամսյակ՝ հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը

Չորրորդ եռամսյակ՝ հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը

Եթե Դուք հաշմանդամ եք դառնում ...	Այս, սովորաբար, Ձեզ անհրաժեշտ է՝
Ձեր 24 տարեկանը լրանալու կամ դրան նախորդող եռամսյակում	1.5 տարվա աշխատանքային փորձ երեք տարվա ժամանակահատվածի ընթացքում, որն ավարտվում է Ձեր հաշմանդամության դեպքի մեկնարկման եռամսյակով:
Ձեր 24 տարեկանը լրանալուն հաջորդող եռամսյակում, սակայն, 31 տարեկանը լրանալուն նախորդող եռամսյակում:	Աշխատանքային փորձ՝ Ձեր 21 տարեկանը լրանալուն հաջորդող եռամսյակով սկսված և հաշմանդամ դառնալու եռամսյակով ավարտված ժամանակահատվածի կեսի չափով: Օրինակ՝ եթե Դուք դառնում եք հաշմանդամ Ձեր 27-ը լրանալու եռամսյակում, ապա Ձեզ անհրաժեշտ է երեք տարվա աշխատանքային փորձ ունենալ տվյալ վեց տարվա ժամանակահատվածի ընթացքում, որն ավարտվում է Ձեր հաշմանդամության դեպքի մեկնարկման եռամսյակով:
Ձեր 31 տարեկանը լրանալու եռամսյակում կամ ավելի ուշ	5 տարվա աշխատանքային փորձ 10 տարվա ժամանակահատվածի ընթացքում, որն ավարտվում է Ձեր հաշմանդամության դեպքի մեկնարկման եռամսյակով:

Ստորև աղյուսակում ներկայացված են օրինակներ, թե որքա՞ն աշխատանքային փորձ է անհրաժեշտ աշխատանքային տևողության ստուգարքի պահանջների համապատասխանելու համար՝ եթե հաշմանդամ եք դառնում որոշակի տարիքում: Աշխատանքային տևողության ստուգարքի համար, անհրաժեշտ չէ որպեսզի Ձեր աշխատանքային փորձը համապատասխանի որոշ ժամանակահատվածին:

ՆՇՈՒՄ. *տվյալ աղյուսակը չի ներառում բոլոր դեպքերը՝*

Եթե Դուք հաշմանդամ եք դառնում ...	Այս, սովորաբար, Ձեզ անհրաժեշտ է՝
Մինչև 28 տարեկանը	1.5 տարվա աշխատանքային փորձ
30 տարեկանում	2 տարի
34 տարեկանում	3 տարի
38 տարեկանում	4 տարի
42 տարեկանում	5 տարի
44 տարեկանում	5.5 տարի
46 տարեկանում	6 տարի
48 տարեկանում	6.5 տարի
50 տարեկանում	7 տարի
52 տարեկանում	7.5 տարի
54 տարեկանում	8 տարի
56 տարեկանում	8.5 տարի
58 տարեկանում	9 տարի
60 տարեկանում	9.5 տարի

Ինչպե՞ս ես պետք է դիմեմ հաշմանդամության նպաստների համար՝

Գոյություն ունի հաշմանդամության նպաստների համար դիմելու երկու եղանակ: Դուք կարող եք՝

1. Դիմել առցանց **www.socialsecurity.gov** կայքում; կամ
2. Չանգահարել մեր անվճար **1-800-772-1213** հեռախոսահամարին՝ Ձեր տեղամասային Սոցիալական Ապահովության գրասենյակում հաշմանդամության հայտ ներկայացնելու նպատակով ընդունելության գրանցվելու համար կամ Ձեր հայտը հեռախոսով ձևակերպելու նպատակով որևէ մեկի հետ պայմանավորվածություն ձեռք բերելու համար: Հաշմանդամության հայտի ներկայացման հարցազրույցը տևում է մոտ մեկ ժամ: Խլության կամ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում, Դուք կարող եք զանգահարել մեր անվճար **1-800-325-0778** հեռատիպ (TTY) հեռախոսահամարով՝ աշխատանքային օրերին առավոտյան 7-ից մինչև երեկոյան 7-ը: Ընդունելության համար գրանցվելու դեպքում, մենք Ձեզ կուղարկենք Հաշմանդամության Մեկնարկման Ձեռնարկը (Disability Starter Kit), որը Ձեզ կօգնի նախապատրաստվել Ձեր Հաշմանդամության հայտի ներկայացման հարցազրույցին: Հաշմանդամության Մեկնարկման Ձեռնարկը (Disability Starter Kit) հասանելի է նաև առցանց՝ **www.socialsecurity.gov/disability** կայքում:

Սոցիալական Ապահովության հետ որևէ գործարք կատարելիս՝ Դուք իրավունք ունեք փաստաբանի կամ Ձեր ընտրությամբ որևէ այլ որակավորված անձի կողմից ներկայացուցչության: Լրացուցիչ տեղեկատվությունը կարող եք ծանոթանալ

Ներկայացուցչության Ձեր Իրավունքը (Your Right To Representation) ձեռնարկից (Հրատարակություն թիվ 05-10075-AM), որը սույնպես հասանելի է Սոցիալական Ապահովության գրասենյակում:

Ե՞րբ ես պետք է դիմեմ, և ի՞նչ տեղեկատվություն է ինձ անհրաժեշտ՝

Դուք պետք է դիմեք հաշմանդամության նպաստի համար՝ Ձեր հաշմանդամ դառնալու պահից որքան հնարավոր է շուտ: **Հաշմանդամության նպաստի դիմումի վերանայման գործընթացը կարող է տևել երեքից հինգ ամիս:** Հաշմանդամության նպաստներին դիմելու համար՝ Ձեզ անհրաժեշտ է լրացնել Սոցիալական Ապահովության նպաստների դիմումը: Դուք կարող եք դիմել առցանց՝ **www.socialsecurity.gov** կայքում: Հնարավոր է մենք կարողանանք արագացնել Ձեր դիմումի ընթացքը, եթե Դուք օգնեք մեզ անհրաժեշտ այլ տեղեկատվության ձեռք բերման հարցում:

Մեզ անհրաժեշտ տեղեկատվությունը ներառում է՝

- Ձեր Սոցիալական Ապահովության համարը;
- Ձեր ծննդյան կամ մկրտության վկայականը;
- Ձեզ խնամած բժիշկների, սոցիալական աշխատողների, հիվանդանոցների և բուժարանների անունները, հասցեները և հեռախոսահամարները, ինչպես նաև Ձեր այցելությունների ամսաթվերը;
- Ձեր կողմից ընդունված բոլոր դեղամիջոցների անունները և դեղաչափերը;
- Ձեր բժիշկների, թերապևտների, հիվանդանոցների, բուժարանների և սոցիալական աշխատողների կողմից տրված բժշկական տեղեկանքները, որոնք արդեն Ձեր տրամադրության տակ են;

- Տարրալուծարան և գնևուժությունների արդյունքները;
- Ձեր աշխատավայրի և աշխատանքի բնույթի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը; և
- Ձեր ամենավերջին W-2 Ձևաթղթի կրկնօրինակը (Աշխատավարձի և Հարկերի Հայտարարագիր -Wage and Tax Statement), կամ, ինքնաշխատ լինելու դեպքում, վերջին տարվա համար Ձեր դաշնային հարկային հայտարարագիրը:

Ի հավելումն հաշմանդամության նպաստների հիմնական դիմումին, Ձեզ նաև անհրաժեշտ կլինի լրացնել այլ ձևաթղթեր: Ձևաթղթերից մեկում տրամադրվում է տեղեկատվություն Ձեր առողջական վիճակի վերաբերյալ և, թե ինչպե՞ս է այն անդրադառնում աշխատելու Ձեր կորոողության վրա: Մյուս ձևաթղթերով թույլատրվում է, որպեսզի Ձեզ բուժող բժիշկները, հիվանդանոցները և առողջապահական ինսամք տրամադրող այլ մասնագետները մեզ տրամադրեն Ձեր առողջական վիճակին առնչվող տեղեկատվություն:

Մի՛ հետաձգեք նպաստների համար դիմելու հարցը, եթե անգամ չեք կարողանում արագ հավաքել այս ամբողջ տեղեկատվությունը: Մենք կօգնենք Ձեզ ստանալ այն:

Ով է որոշում, թե արդյո՞ք ես հաշմանդամ եմ՝

Մենք կվերանայենք Ձեր դիմումը, որպեսզի համոզվենք, որ Դուք համապատասխանում եք հաշմանդամության նպաստների որոշակի հիմնական պահանջներին: Մենք կստուգենք, թե արդյո՞ք Դուք բավականաչափ աշխատել եք՝ նպաստին իրավասու լինելու համար: Ինչպես նաև, մենք կգնահատենք Ձեր ներկայիս աշխատանքային գործնությունը: Եթե Դուք համապատասխանում եք նշված պահանջներին, ապա մենք ընթացք կտանաք Ձեր դիմումին և կուղարկենք Ձեր դիմումը

Ձեր նահանգի Հաշմանդամության Որոշման Ծառայությունների (Disability Determination Services) գրասենյակ:

Այդ նահանգային գործակալությունը մեզ համար կայացնում է հաշմանդամության վերաբերյալ նախնական որոշումը: Պետական գործակալության բժիշկները և հաշմանդամության մասնագետները Ձեր բժիշկներին հարցում կկատարեն Ձեր վիճակի մասին: Նրանք հաշվի կառնեն Ձեր գործում առկա բոլոր փաստերը: Նրանք կօգտագործեն այն բոլոր բժշկական վկայությունները, որոնք կստանան Ձեր բժիշկներից, հիվանդանոցներից, բուժարաններից կամ այլ հաստատություններից, որտեղ Դուք բուժում եք ստացել, ինչպես նաև ողջ այլ տեղեկատվությունը: Նրանք Ձեր բժիշկներից կհարցնեն հետևյալը՝

- Ձեր առողջական վիճակը:
- Երբ է սկսվել Ձեր առողջական խնդիրը;
- Ինչպե՞ս է Ձեր առողջական վիճակը սահմանափակում Ձեր գործողությունները;
- Բժշկական գնևուժությունների արդյունքները; և
- Ին՞չ բուժում եք Դուք ստացել:

Նրանք նույնպես Ձեր բժիշկներին կխնդրեն տեղեկատվություն տրամադրել աշխատանքին առանչվող որևէ գործողությունների կատարման Ձեր կարողությունների վերաբերյալ. օրինակ ինչպես՝ քայլելը, նստելը, որևէ բան բարձրացնելը, կրելը և հանձնարարությունների հիշելը: Ձեր բժիշկները չեն որոշում Ձեր հաշմանդամ լինելու հարցը:

Հնարավոր է, որ նահանգային գործակալության անձնակազմը, ավելի շատ բժշկական տեղեկատվության կարիք ունենա՝ նախքան կարողանա որոշում կայացնել Ձեր հաշմանդամության վերաբերյալ: Եթե Ձեր բժշկական աղբյուրները չկարողանան տրամադրել անհրաժեշտ

տեղեկատվությունը, նահանգային գործակալությունը կարող է խնդրել Ձեզ, որպեսզի անցնեք հատուկ զննություն: Մենք նախընտրում ենք, որ դա անի Ձեր իսկ բժիշկը, սակայն, երբեմն, հնարավոր է զննությունը իրականացվի մեկ այլ բժիշկի կողմից: Սոցիալական Ապահովությունը կվաճարի զննության և դրան առնչվող որոշ ճանապարհային ծախսերը:

Ինչպե՞ս ենք մենք որոշում կայացնում`

Մենք կիրառում ենք հինգ քայլից բաղկացած գործընթաց` Ձեր հաշմանդամության հարցը որոշելու համար:

1. Արդյո՞ք Դուք աշխատում եք:

Եթե Դուք աշխատում եք, և Ձեր հասույթի միջինը յուրաքանչյուր ամիս կազմում է որոշակի գումարից ավելի, ապա սովորաբար մենք Ձեզ չենք համարի հաշմանդամ: Որոշակի գումարի սահմանաչափը փոփոխվում է ամեն տարի: Ներկայումս գործող սահմանաչափին ծանոտացեք *Նորույթներ (Update)* տարեկան տեղեկագրից (Հրատարակություն թիվ 05-10003-AM)։

Եթե Դուք չեք աշխատում, և Ձեր ներկայիս ամսական հասույթի միջինը յուրաքանչյուր ամիս հասնում է ներկայումս սահմանված գումարին կամ ավելի քիչ, ապա նահանգային գործակալությունը դիտարկում է Ձեր առողջական վիճակը:

2. Արդյո՞ք Ձեր առողջական վիճակը “ծանր է”`

Որպեսզի Դուք ճանաչվեք հաշմանդամ Սոցիալական Ապահովության սահմանման ներքո` Ձեր առողջական վիճակը պետք է նշանակալիորեն սահմանափակի հիմնական գործողությունների կատարման կարողությունը առնվազն մեկ տարվա ընթացքում, օրինակ ինչպես` որևէ բան բարձրացնելը, կանգնելը, քայլերը, նստելը և

հիշելը: Եթե Ձեր առողջական վիճակը ծանր չէ, ապա մենք չենք համարի Ձեզ հաշմանդամ: Եթե Ձեր առողջական վիճակը ծանր է, ապա մենք կանցնենք երրորդ քայլին:

3. Արդյո՞ք Ձեր առողջության անբավարար վիճակը համապատասխանում է կամ բժշկորեն հավասարազոր է ցանկում նշված դեպքերին`

Առողջության անբավարար վիճակների մեր ցանկում (ցուցակներ) նկարագրված են այն առողջական վիճակները, որոնք մենք համարում ենք բավականին ծանր, ինչը թույլ չի տալիս, որպեսզի անձը կատարի Էապես շահեկան որևէ գործողություն` անկախ տարիքից, կրթությունից և աշխատանքային փորձից: Եթե Ձեր առողջական վիճակը (կամ առողջական վիճակների համադրությունը) այդ ցանկում ընդգրկված չէ, ապա նահանգային գործակալությունը դիտարկում է, թե արդյո՞ք Ձեր վիճակը նույնքան ծանր է որքան ցանկում առկա վիճակը: Եթե Ձեր առողջական վիճակի ծանրությունը համապատասխանում կամ հավասարազոր է ցանկում առկա անբավարար վիճակի ծանրությանը, ապա նահանգային գործակալությունը կորոշի, որ Դուք ունեք իրավունակ հաշմանդամություն: Եթե Ձեր առողջական վիճակի ծանրությունը չի համապատասխանում կամ հավասարազոր չէ ցանկում առկա անբավարար վիճակի ծանրությանը, ապա նահանգային գործակալությունը անցնում է չորրորդ քայլին:

4. Արդյո՞ք Դուք կարող եք կատարել Ձեր կողմից նախկինում կատարված աշխատանքը`

Այս քայլին մենք որոշում ենք, թե արդյո՞ք Ձեր առողջության անբավարար վիճակը կանխում է նախկինում Ձեր կողմից իրականացված որևէ աշխատանքային գործնեության կատարումը: Եթե ոչ, ապա Ձեր հաշմանդամությունը չի համարվի իրավունակ: Եթե այո, ապա մենք կանցնենք հինգերորդ քայլին:

5. Արդյո՞ք Դուք կարող եք կատարել որևէ տեսակի աշխատանք՝

Եթե չեք կարողանում կատարել նախկինում Ձեր կողմից կատարված աշխատանքը, մենք դիտարկում եք, թե արդյո՞ք Դուք կկարողանաք կատարել մեկ այլ տեսակի աշխատանք՝ չնայած Ձեր առողջության անբավարար վիճակին: Մենք հաշվի ենք առնում Ձեր տարիքը, կրթությունը, անցյալ աշխատանքային փորձը, և Ձեր որևէ հմտություն, որը կարող է կիրառել մեկ այլ տեսակի աշխատանք կատարելու համար: Եթե Դուք չեք կարողանա կատարել մեկ այլ տեսակի աշխատանք, ապա մենք կորոշենք, որ Դուք հաշմանդամ եք: Եթե կարողանաք կատարել մեկ այլ տեսակի աշխատանք, ապա մենք կորոշենք, որ Դուք չունեք հաշմանդամության իրավասություն:

Հատուկ կանոններ կույրերի համար՝

Կույր անձանց համար կան հատուկ կանոններ: Լրացուցիչ տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ *Եթե Դուք Կույր եք կամ Ունեք Վատ Տեսողություն՝ Ինչպե՞ս Մենք Կարող ենք Օգնել (If You Are Blind Or Have Low Vision — How We Can Help)* տեղեկագրից (Հրատարակություն թիվ 05-10052):

Մենք կհայտնենք Ձեզ մեր որոշումը՝

Երբ նահանգային գործակալությունը Ձեր գործով որոշում կկայացնի՝ մենք Ձեզ նամակ կուղարկենք: Ձեր դիմումի հաստատման դեպքում՝ Ձեզ ուղված նամակում նշված կլինի Ձեր նպաստի գումարը և վճարումների մեկնարկման ժամկետը: Եթե Ձեր դիմումը չի բավարարվում, ապա նամակում կբացատրվեն մերժման պատճառները, ինչպես նաև կնկարագրվի թե ինչպե՞ս բողոքարկել որոշումը՝ դրա հետ անհամաձայն լինելու դեպքում:

Ի՞նչ անեն, եթե համաձայն չեմ՝

Եթե Դուք համաձայն չեք Ձեր պահանջի վերաբերյալ կայացված որոշման հետ, ապա կարող եք բողոքարկել այն: Ձեր կողմից նախաձեռնվող քայլերը բացատրվում են *Բողոքարկման գործընթացը (The Appeals Process)* տեղեկագրում (Հրատարակություն թիվ 05-10041-AM), որը հասանելի է Սոցիալական Ապահովությունից:

Ինչպե՞ս ենք կապ հաստատելու Ձեզ հետ՝

Սովորաբար, Ձեր նպաստների վերաբերյալ Ձեզ հետ կապ հաստատելու նպատակով մենք օգտվում ենք փոստից կամ զանգահարում հեռախոսով, սակայն, երբեմն, Սոցիալական Ապահովության ներկայացուցիչը կարող է Ձեզ տանը այցելել: Մեր ներկայացուցիչը անձը հաստատող փաստաթուղթ կներկայացնի՝ նախքան Ձեր նպաստների մասին խոսելը: Դուք կարող եք զանգահարել Սոցիալական Ապահովության գրասենյակ՝ տեղեկանալու, թե արդյո՞ք Ձեզ մոտ որևէ ներկայացուցիչ է ուղեգրվել:

Եթե Դուք կույր եք կամ թույլ տեսողություն ունեք, ապա մենք կարող ենք Ձեզ ծանուցումներ ուղարկել, Ձեր կողմից ընտրված հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

- Ստանդարտ տպագիր ծանուցում՝ առաջին կարգի փոստով;
- Ստանդարտ տպագիր ծանուցում՝ պատվիրված փոստով;
- Ստանդարտ տպագիր ծանուցում՝ առաջին կարգի փոստով և հետևողական հեռախոսազանգ;
- Բրեյլի համակարգով ծանուցում և ստանդարտ տպագիր ծանուցում՝ առաջին կարգի փոստով;

- Microsoft Word ձևաչափի նիշք (ֆայլ) տվյալների կոմպակտ սկավառակի վրա (CD) և ստանդարտ տպագիր ծանուցում՝ առաջին կարգի փոստով;
- Ձայնասկավառակ (Audio CD) և ստանդարտ տպագիր ծանուցում՝ առաջին կարգի փոստով; կամ
- Խոշոր տպագիր ծանուցում (18 տառաչափ) և ստանդարտ տպագիր ծանուցում՝ առաջին կարգի փոստով:

Լրացուցիչ տեղեկատվության համար այցելեք մեր կայքէջը՝ <https://www.ssa.gov/people/blind/> հասցեով, կամ զանգահարեք մեր անվճար **1-800-772-1213** հեռախոսահամարին: Խլության կամ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում, Դուք կարող եք զանգահարել մեր **1-800-325-0778** հեռատիպի (TTY) հեռախոսահամարով:

Ի՞նչ է տեղի ունենում, երբ իմ պահանջը հաստատվում է՝

Մենք Ձեզ կամակով կտեղեկացնենք Ձեր դիմումի հաստատման մասին, ինչպես նաև կհայտնենք Ձեր ամսական նպաստի չափը և ուժի մեջ մտնելու ամսաթիվը: Ձեր հաշմանդամության ամսական նպաստի չափը որոշվում է՝ հիմնվելով ողջ կյանքի ընթացքում Ձեր աշխատած միջին հասույթի վրա: Սոցիալական Ապահովության հաշմանդամության Ձեր առաջին նպաստը կվճարվի Ձեր հաշմանդամության մեկնարկման օրվան հաջորդող վեցերորդ լրիվ ամսվա համար:

Օրինակ՝ եթե պետական գործակալությունը որոշում է, որ Ձեր հաշմանդամության մեկնարկը համարվում է հունվարի 15-ը, ապա Ձեր հաշմանդամության առաջին նպաստը կվճարվի հուլիս ամսվա համար: Սոցիալական Ապահովության նպաստները վճարվում են դրանց հաշվեգրման ամսին հաջորդող ամսում. այսպիսով, Ձեր հուլիս ամսվա նպաստը Դուք կստանաք օգոստոսին:

Դուք նաև կստանաք *Ի՞նչ է Անհրաժեշտ Ձեզ Իմանալ, երբ Ստանում եք Հաշմանդամության Նպաստներ (What You Need To Know When You Get Disability Benefits)* տեղեկագիրը (Հրատարակություն թիվ 05-10153), որը Ձեզ կարևոր տեղեկություններ կտրամադրի Ձեր նպաստների վերաբերյալ և կհուշի, թե Ձեր վիճակի որ փոփոխությունների մասին պետք է զեկուցեք մեզ:

Արդյո՞ք կարող է իմ ընտանիքը նպաստներ ստանալ՝

Ձեր ընտանիքի որոշ անդամներ կարող են նպաստ ստանալու իրավասություն ունենալ Ձեր աշխատանքի հիման վրա: Դրանց թվում են՝

- Ձեր ամուսինը/կինը, եթե նա 62 տարեկան է կամ ավելի բարձր;
- Ձեր ամուսինը/կինը, ցանկացած տարիքում, եթե նա խնամում է Ձեր երեխային, որը 16 տարեկանից ցածր է կամ հաշմանդամ;
- Ձեր չամուսնացած երեխան, այդ թվում որդեգրած երեխան, կամ որոշ դեպքերում խորդ երեխան կամ թոռնիկը: Երեխան պետք է լինի 18 տարեկանից ցածր (կամ 19 տարեկանից ցածր և դեռևս ավագ դպրոց հաճախի);
- Ձեր 18 տարեկան և ավելի բարձր չամուսնացած երեխան, եթե նա ունի հաշմանդամություն, որը սկսել է նախքան նրա 22 տարեկան դառնալը: Երեխայի հաշմանդամությունը պետք է նաև համապատասխանի չափահասների համար հաշմանդամության սահմանմանը:

ՆՇՈՒՄ. որոշ դեպքերում *ամուսնալուծված կինը/ամուսինը կարող է Ձեր հասույթից նպաստ ստանալու իրավասություն ունենալ, եթե նա Ձեզ հետ ամուսնացած լինի առնվազն 10 տարվա ընթացքում, ներկայումս ամուսնացած չլինի, և լինի առնվազն 62 տարեկան: Ամուսնալուծված կնոջը/*

ամուսնուն վճարված գումարը չի նվազեցնում Ձեր նպաստը, կամ որևէ այլ նպաստ, որը ենթակա է վճարման Ձեր ներկայիս կնոջը կամ երեխաներին:

Ինչպե՞ս են այլ վճարները ազդում իմ նպաստների վրա՝

Եթե այլ պետական նպաստ եք ստանում (այդ թվում՝ արտասահմանից), դա կարող է ազդել Սոցիալական ապահովության հաշմանդամության նպաստի չափի վրա: Մանրամասների համար տես հետևյալը՝

- *Ինչպես Կարող են Աշխատողների Փոխհատուցման և այլ Հաշմանդամության Վճարները Ազդել Ձեր Նպաստների վրա (How Workers' Compensation And Other Disability Payments May Affect Your Benefits)* (Հրատարակություն թիվ 05-10018);
- *Նպաստների Պայմանների Անսպասելի Կրճատում (Windfall Elimination Provision)* (Հրատարակություն թիվ 05-10045); և
- *Կառավարական Կենսաթոշակի Փոխհատուցում (Government Pension Offset)* (Հրատարակություն թիվ 05-10007):

Դուք կարող եք ստանալ այդ տեղեկագրերը մեր կայքից կամ դիմել մեզ:

Ի՞նչի մասին ես պետք է տեղեկացնեմ Սոցիալական Ապահովությանը՝

Եթե ունեք ձերբակալության չկատարված հրաման՝

Դուք պետք է իրազեկեք մեզ՝ ստորև քրեական հանցագործություններից որևէ մեկի մասով ձերբակալության չկատարված հրաման ունենալու դեպքում՝

- Փախուստ՝ քրեական հետապնդումից կամ ազատագրվումից խուսափելու նպատակով;

- Փախուստ կալանքից; և
- Փախուստ դեպքի վայրից:

Դուք չեք կարող ստանալ կանոնավոր հաշմանդամության նպաստ կամ Ձեզ վճարման ենթակա որևէ չվճարված գումար, այն ամիսներին, որոնց համար Դուք ունեք ձերբակալության չկատարված հրաման՝ վերը նշված քրեական հանցագործություններից որևէ մեկի մասով:

Եթե Դուք դատապարտված եք հանցագործության համար՝

Անմիջապես իրազեկեք Սոցիալական Ապահովությանը՝ որևէ հանցագործության համար դատապարտված լինելու դեպքում: Կանոնավոր հաշմանդամության նպաստները կամ վճարման ենթակա որևէ չվճարված գումարները, չեն վճարվում այն ամիսներին, որոնց ընթացքում անձը ազատագրված է հանցագործության համար, սակայն այդ անձի ընտանիքի ցանկացած անդամ, ով ունի նպաստ ստանուլու իրավասությունը նրա հասույթի ներքո, կարող է շարունակել ստանալ այդ նպաստները:

Ամսական նպաստները և վճարման ենթակա չվճարված գումարները սովորաբար չեն վճարվում՝ հանցանք կատարած և դատարանի որոշմամբ՝ պետության հաշվին ազատագրվման մեջ գտնվող անձին: Սա կիրառելի է եթե անձին ճանաչել են՝

- Անմեղ՝ հոգեկան խանգարման կամ այլ նմանատիպ գործոնների պատճառով (օրինակ ինչպես՝ հոգեկան հիվանդություն, մտավոր թերություն կամ անմեղսունակություն); կամ
- Անմեղսունակ՝ դատարանի առջև ներկայանալու համար

Եթե Դուք խախտում եք պայմանական վաղաժամկետ ազատման կամ փորձաշրջանի պայմանը՝

Դուք պետք է հայտնեք մեզ, եթե խախտում եք դաշնային կամ նահանգային օրենքի ուժով սահմանված փորձաշրջանի կամ պայմանական վաղաժամկետ ազատման պայմանը: Դուք չեք կարող ստանալ կանոնավոր հաշմանդամության նպաստները կամ վճարման ենթակա որևէ չվճարված գումարները, այն ամիսներին, որոնց ընթացքում Դուք խախտել եք Ձեր փորձաշրջանի կամ պայմանական վաղաժամկետ ազատման պայմանը:

Ե՞րբ եմ ես ստանում Medicare-ի ծածկույթ՝

Դուք ինքնաբերաբար կստանաք Medicare-ի ապահովագրության ծածկույթ՝ երկու տարվա ընթացքում հաշմանդամության նպաստ ստանալուց հետո: Medicare ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ *Medicare* տեղեկագրից (Հրատարակություն թիվ 05-10043-AM):

Ի՞նչ է ինձ անհրաժեշտ իմանալ աշխատելու մասին՝

Սոցիալական Ապահովության հաշմանդամության նպաստ ստանալուց հետո, հնարավոր է Դուք կրկին ցանկանաք աշխատելու փորձ կատարել: Սոցիալական Ապահովության վարչությունն ունի հատուկ կանոններ, որոնք կոչվում են աշխատանքի խթաններ, որոնք թույլ են տալիս Ձեզ ստուգելու Ձեր աշխատելու կարողությունը և շարունակել ստանալ ամսական Սոցիալական Ապահովության հաշմանդամության նպաստները: Դուք կարող եք նաև աջակցություն ստանալ՝ աշխատանքի համար անհրաժեշտ ուսուցման, վերականգնման և վերապատրաստման հարցերում:

Եթե աշխատանքի եք անցնում կամ ինքնաշխատ եք դառնում, ապա անմիջապես տեղեկացրեք մեզ այդ մասին: Մեզ անհրաժեշտ է իմանալ, թե երբ եք Դուք մեկնարկել կամ դադարել աշխատելը կամ եթե որևէ փոփոխություններ են տեղի ունեցել Ձեր պարտականություններում, աշխատանքային ժամերում կամ վճարման դրույքաչափում: Դուք կարող եք զանգահարել մեզ **1-800-772-1213** անվճար հեռախոսահամարով: Խլության կամ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում, Դուք կարող եք զանգահարել մեր անվճար **1-800-325-0778** հեռախոս (TTY) հեռախոսահամարով:

Աշխատանքի վերադառնալու գործում Ձեզ աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար խնդրեք *Հաշմանդամության Ընթացքում Աշխատելը. Ինչպես Կարող ենք Օգնել (Working While Disabled — How We Can Help)* տեղեկագիրը (Հրատարակություն թիվ 05-10095-AM): Չբաղվածության աջակցության մեր բոլոր ծրագրերի ուղեցույցը կարող եք գտնել մեր *Կարմիր գիրք. Հաշմանդամ Անձանց Չբաղվածության Աջակցության Անփոփ Ուղեցույց՝ Սոցիալական Ապահովության Հաշմանդամության Ապահովագրության և Հավելյալ Ապահովության Եկամտի ծրագրերի շրջանակներում (Red Book, A Summary Guide to Employment Support for Individuals with Disabilities Under the Social Security Disability Insurance and Supplemental Security Income Programs)* տեղեկագրում (Հրատարակություն թիվ 64-030): Ինչպես նաև այցելեք մեր կայքը՝ **www.socialsecurity.gov/work**:

Աշխատանքի Ձեր Կտրոնը Ծրագիրը՝

Այս ծրագրի շրջանակներում՝ Սոցիալական Ապահովության և Հավելյալ Ապահովության Եկամտի հաշմանդամության նպաստառուները կարող են **անվճար** աջակցություն ստանալ՝ աշխատանքի անցնելու համար նրանց անհրաժեշտ վերապատրաստման և այլ ծառայությունների համար: Նպաստառուների մեծամասնությունը իրավասու է մասնակցելու Աշխատանքի Ձեր Կտրոնը ծրագրին և կարող է իր նախընտրությամբ ընտրել հաստատված մատակարարներից որևէ մեկին՝ իրենց անհրաժեշտ ծառայությունները ստանալու համար: Այս ծրագրի մասին լրացուցիչ տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ Աշխատանքի Ձեր Կտրոնը (*Your Ticket to Work*) տեղեկագրից (Հրատարակություն թիվ 05-10061):

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այեցելեք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնությունը վարելու ամենհարմար եղանակը դա մեր՝ **www.socialsecurity.gov** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Եզված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելեք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը)՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Չանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213**

հեռախոսահամարով կամ մեր
TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778**
հեռախոսահամարով՝ լսողության հետ
խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք
ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել
Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ
ժամը առավոտյան 07:00-ից մինչև
երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր
համբերատարությունը ծանրաբեռնված
շրջաններում, քանի որ Դուք կարող եք
ունենալ սովորականից ավելի հաճախ
ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան
և ավելի երկար սպասելաժամանակ մեզ
հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք
սպասարկել Ձեզ:



Securing today
and tomorrow

Social Security Administration
Publication No. 05-10029-AM | January 2017
Հաշմանդամության Նպաստներ
Disability Benefits (Armenian)

Produced and published at U.S. taxpayer expense
Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: